

ՀԱՄԻԴՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՅԱՅԿԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
(1898–1908 թթ.)

ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Թուրքական պետության դադտնի ոստիկանապետ Մ. Բ. Հաջետլաչեն խոսելով սուլթան Համիդի մասին, 1916 թ. Փարիզում հրատարակած իր հուշերում գրում էր. «Ես երբեք չեմ տեսել այնպիսի մի ատելութուն, որպիսին տածում էր սուլթանը հայերի նկատմամբ»<sup>1</sup>: Ոստիկանապետը մեծ ոճրագործի այդ ատելութունը բացատրում էր նրանով, որ նրա մայրն իբր, եղել է հայուհի, հանդիսացել է սուլթանուհի էսմե-խանումի պարուհին և մահմեդականություն է ընդունել կամավոր, մահից մեկ ամիս առաջ<sup>2</sup>, իսկ Համիդը որպես թե հայկական արյուն խմելով աշխատել է հերքել իր հայկական արդանդից սերվելու հանգամանքը: Մեզ չի զարմացնում Մ. Բ. Հաջետլաչենի այս վերսիսան, քանի որ իր ժողովրդին քիչ թե շատ հաճող ամեն մեկը կցանկանար հեռու պահել նրան Արդուլ Համիդից: Չէ՞ որ բռնակալը դեռ իր ժամանակակիցների կողմից, ի թիվս շատ մականունների, իրավամբ հորջորջվում էր նաև ամոթի և խայտառակության սուլթան<sup>3</sup>:

Հանրահայտ է սակայն, որ Համիդի հայակեր քաղաքականությունը պայմանավորված էր ոչ թե նրա մոր ազդեցությամբ, այլ հենց իր մոլեռանդ մահմեդականությունով և, որ կարևորն է, իմպերիալիստական նկրտումներով: Նպատակ ունենալով ընդարձակել Օսմանյան կայսրության սահմանները դեպի արևելք, ընդհուպ մինչև Ալթայ և դիտելով իրենց ազատության համար պայքարող հայերին իբրև խոչընդոտ այդ ճանապարհին, Արդուլ Համիդն աշխատում էր վերացնել այդ խոչընդոտը, նրանց զանգվածաբար բնաջնջելով կամ արտաքսելով: Չկարողանալով լուծել այդ խնդիրը 90-ական թվականների կոտորածների ժամանակ, սուլթանը հետևողականորեն ձգտում էր վճռել այն նաև XX դ. սկզբին:

Ի՞նչ մեթոդներ էր կիրառում նա արևմտահայության հալածանքների սաստկացման և ֆիզիկական բնաջնջման ուղղությամբ: Ամենից առաջ Արդուլ Համիդը հեղեղում է երկրի վարչական ու ոստիկանական ապարատը մահմեդականներով և արտամղում այնտեղից այս կամ այն ճանապարհով տեղ գտած սակավաթիվ քրիստոնյաներին, հատկապես հայերին: Շրջանցելով այն հայերին միայն, որոնք ստրկամտորեն, հլու-հնազանդ

1 М. Б. Х а д ж е л а ш е н. Убийца на троне (записка начальника тайной полиции в Турции). Пг., 1918, с. 223.

2 Նույն տեղում:

3 Բ ո լ Բ ե կ լ ա. Լրտեսներու երկիրը և Ապտիլ-Համիտ, թարգմանիչ Բ. Պողաճյան. Կ. Պոլիս, 1913, էջ 172:

ծառայում էին իրեն և զբաղեցնում երկրորդական պաշտոններ: Բռեյան եղբայրները, խոսելով այդպիսի հայ պաշտոնյաների մասին, իրենց հուշերում նկարագրում էին նրանց ստոր վարքագիծը և նշում, թե նրանք «ավելի լավ էր, որ բնավ պաշտոնի վրա չմնային»<sup>4</sup>: Սուլթանը վարչական ու ոստիկանական պաշտոններում նշանակում էր այնպիսի մարդկանց, որոնք ներծծված էին մահմեդական թուևոտ ֆանատիզմով, օրգանական ատելություն ունեին հայերի նկատմամբ և հուշակված էին իրենց դաժանութուններով ու վայրագություններով:

Արգուլ Համիդը Արևմտյան Հայաստանում ստեղծեց նաև զանազան ունակցիոն կազմակերպություններ: Այսպես, XIX դ. 90-ական թվականների կոտորածներից համարյա անմիջապես հետո առաջ եկան «Ազգային պաշտպանություն», 1903 թ.՝ «Ջանբեգարների» («Գլխից անցածների» կամ «Գլխից ձեռք քաշածների») և «Սեյարե», իսկ 1904 թ.՝ «Վաթանփերվերիներ» («Հայրենասերների») խմբերը, որոնք բաղկացած էին մինչև 300 հոգուց և կոչված էին օժանդակելու թուրքական իշխանություններին ոչ միայն հարկերն ու տուրքերը հավաքելու, այլև գյուղացիների դիմադրավումները ճնշելու և հայգուկներին հետապնդելու ու որսալու գործում<sup>5</sup>: Այդ խմբերում հավաքագրվել էին թուրք, քուրդ ու չերքեզ մարդասպաններ, ավազակներ, գողեր և նման այլ տականքներ, որոնք կառավարությունից ստանալով ոռճիկ (ամիսը՝ 1,5 լիրա), ձի, զենք ու հանդերձանք, շրջում էին Վասպուրականի, Բարձր Հայքի և հատկապես Տարոնի շրջանները և դաժանորեն իրադործում իրենց ֆունկցիաները: 1904 թ. «Դրոշակ»-ը գրում էր «Ջանբեգարների» մասին, որ նրանք «աղատ ելումուտք պիտի ունենան այս այն կողմը, պիտի թափառեն ամեն տեղ և անձնվիրաբար նպաստեն կառավարության շահատակություններին, պիտի հսկեն հայոց հեղափոխական շարժումներին, հարցաքննեն ու պատժեն ինչպես իրենք են ցանկանում. նոքա հանձ են առել և պատրաստություն են տեսնում արշավելու ապստամբ Սասունի վրա, նրան իսպառ ջնջելու համար: Ջանբեգարների ալայբեյր իր վրա է վերցրել հատուկ պարտավորություններ ևս – նա բացարձակ սկսել է ազարակներից հավաքել մնացորդ ամբողջ բահիաները (տուրքերը), մեծ խմբով շրջում է այս ու այն կողմը և բռնի առնում է, ինչ որ ուզում է»<sup>6</sup>:

Չբավարարվելով այդ ունակցիոն խմբերի ստեղծումով, սուլթանը Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, գերազանցապես այն շրջաններում, որոնք աչքի էին ընկել իրենց ազատագրական ելույթներով, հիմնում է զորանոցներ և, յուրաքանչյուրում պահելով 400–500 զինվոր, ցուցում տալիս՝ դաժանորեն ճնշել ըմբոստացման ամեն մի փորձ: Այդպիսի զորանոցներ ամենից շատ հիմնվում են Սասունում. բռնակալը ուղղակի ճամբարի է վերածում այդ գավառի համարյա բոլոր մարդաշատ գյուղերը՝

4 Մ. և Ս. Բ դ ե յ ա ն. Հարազատ պատմություն Տարոնոյ, խմբագրեց Աղան Տարոնեցին, Գահիրե, 1962, էջ 103:

5 Տե՛ս Российский государственный исторический архив (այսուհետև՝ РГИА) ֆ. «4. Պոլսի դեսպանությունը», 1904, գ. 2672, թթ. 8, 9, ֆ. «Քաղաքիսիվ», 1909, ց. 482, գ. 543, թթ. 65–66, «Հնչակ», 1901, №5, էջ 42, «Դրոշակ», 1905, №1, էջ 15, 1906, №10, էջ 148:

6 «Դրոշակ», 1904, №7, էջ 95:

Տափկը, Սեմալը, Իշխանաձորը, Տալվորիկը, Կելիկուզանը և այլն<sup>7</sup>: 1904 թ. ամռանը սասունցիները Կ. Պոլսի պատրիարքին ուղարկած իրենց բողոքագրում նշում էին, թե կառավարությունն այնպիսի ռեժիմ է ստեղծել, որ իրենք ոչ միայն չեն կարողանում վերակառուցել իրենց ավերված տները, այլև չեն կարողանում դուրս գալ բնակավայրերից ու կասկել քաղաքի հետ: Նրանք գրում էին, որ իրենք մերկ են ու բոկոտն, զրկված են ուտելիքից և սովամահ են լինում այդ բառի իսկական իմաստով: Վերջում խնդրում էին կամ մի ճար անել, «կամ դմեղ սուրբ անցուցանել տվեք, որ աղատվենք»<sup>8</sup>:

Միաժամանակ բռնակալը մեծացնում է Արևմտյան Հայաստանում տեղավորված թուրքական զորամասերի թիվը: Նա գտնում էր, որ այնտեղ, որտեղ տկար են ոստիկանները, օգնություն կհասնեն զինվորներն ու համիդիները:

Ղեկավարվելով այն համոզմունքով, որ գահի վրկությունն իր հպատակների մտքերի հսկողություն մեջ է՝ Աբդուլ Համիդն ընդլայնում է լրտեսական ցանցը: Լրտեսությունը նա իրախուսում էր և՛ նյութապես, և՛ բարոյապես: Յուրաքանչյուր մահմեդականի գիտակցությանն էր հասցվում այն միտքը, թե լրտեսությամբ դաղվողը կստանա պաշտոն, մեծամեծ գումարներ, իսկ չգրադվողը կհայտարարվի ոչ հայրենասեր: Շուտով լրտեսներ նշանակվեցին նույնիսկ լրտեսների վրա, որոնք աշխատում էին որքան հնարավոր է շուտ տեղ հասցնել ստացած լուրը: Այն պաշտոնյաները, ովքեր անհետևանք կթողնեին ստացած լուրը<sup>9</sup>, կմեղադրվեին պետական գավաճանություն մեջ: Հաճախ էր պատահում, որ պաշտոն ստանալու կամ գումար վաստակելու համար եղբայրը մատնում էր եղբորը, ընկերոջը<sup>10</sup>:

Լրտեսների հաղորդած սուտ ու սխալ տեղեկություններով հազարավոր մարգիկ էին տանջվում թուրքական բանտերում: Այսպես. Բիթլիսում 1898–1904 թթ. բանտարկյալների թիվը 70-ից հասավ 250-ի<sup>11</sup>: Վանում նրանց քանակը նույնպես օրեցօր աճում էր<sup>12</sup>: Կ. Պոլսի ռուսական դեսպանը 1899 թ. հոկտեմբերի 2-ին հաղորդում էր, որ թուրքիայի հայկական վիլայեթներում բանտերը լի են հայ կալանավորներով: Նրանք մեղադրվում են հեղափոխական գործունեություն մեջ, սակայն առանց լուրջ մեղադրանքի<sup>13</sup>: Սուլթանի դահիճները հայ բանտարկյալներին փակում էին մուլթ

7 «Դրոշակ», 1906, № 4, էջ 93:

8 «Դրոշակ», 1904, № 11, էջ 165:

9 Г. З. Алиев. Турция в период правления младотурок (1908–1918). М., 1972, с. 50.

10 Ուշադրավ է, որ 1908 թ., երբ արձակվեց լրտեսների բանակը, 30000 մարդ մնաց առանց հացի: Երիտթուրքական պաշտոնյա Հյուսեին Ջահիդ Յալչին առաջարկեց հրապարակել Աբդուլ Համիդին ուղարկած մատնությունները, սակայն իթիհատի պարազուխները մերժեցին, պատճառաբանելով, թե մի շարք մանր պաշտոնյաներ, որոնք մի կտոր հացի համար ժամանակին զբաղվել են մատնությամբ, կընկնեն ծանր կացության մեջ: Եվ պառլամենտի որոշումով մատնությունների մեծ մասն այրվեց (նույն տեղում, էջ 50–51):

11 Տե՛ս РГА, ф. «Կ. Պոլսի դեսպանությունը», գ. 1399, թ. 168, «Դրոշակ», 1898, № 6, էջ 52:

12 «Դրոշակ», 1898, № 7, էջ 62:

13 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966, с. 140–141.

ու խոնավ նկուղներում, անարդուում ու ծեծում էին, խոշտանգում ու սպանում: Միսաք Բղեյանը, որ ճաշակել էր համիդյան բանտի «քաղցրութուններ», իր հուշերում պատմում էր, թե այնտեղ կային տանջանքի հետևյալ դործիքները. «աքցան մը, որով ակուսնիս պիտի քաշեր, երկաթյա ձող մը, զոր կարմրեցնելով մեր մարմնի ուզած տեղը կը տաղեր, զմեխ մը, որ մատներու եղունգները կը զատեր միսեն, չվան մը, որով ոտքերն ու ձեռքերը կապելով գետին նետեր զոհը և պղծեր, տասնյակ մը դալար և հաստ փայտեր ատոնցմով ալ դոհի կաշին կապուլտի վերածել ծեծելով, թիակ և բրիչ մը զոհը բանտեն դուրս հանելով, գերեզմանատան մեջ իր սեփական դերեզմանը փորել տալու համար և հոն դնդակահարելով դիակը նետել այդ փոսին մեջ»<sup>14</sup>: «Մուշի բանտում տիւրահոչակ է Չավուշը, որ հայտնի էր իր միջահասակ, դիւրուկ, աչքերը դուրս ցցված կերպարանքով, ծանոթացնում էր ձերբակալվածներին այդ գործիքների հետ և ցինիկաբար ասում. «Ահա, այսքան իշխանութուն հանձնած է ինձի, զոր պիտի գործադրեմ ձեզի հանդեպ»: Եվ նա գործադրում էր առանց խնայելու: Հաղիվ թե գտնվեր մի կալանավոր, որ իր մարմնի վրա ղգացած չլիներ այդ գործիքների ուժը և չսարսափեր նշված դահճի անունը լսելիս»<sup>15</sup>:

Աբդուլ Համիդը 1896 թ. հատուկ օրենքով արդելեց կոտորածներից փախած հայերի վերադարձը Թուրքիա, հատկապես Արևմտյան Հայաստան<sup>16</sup>: Իսկ ցանկացողների թիվը քիչ չէր, բավական է նշել, որ միայն Ռուսաստանում, ավելի ճիշտ՝ Կովկասում այն կազմում էր մոտ 100 հազ. մարդ:

Ցարական կառավարությունը, չկարողանալով սուլթանից ստանալ Արևմտյան Հայաստանում ու Սև ծովի հարավային ափերին երկաթուղիներ կառուցելու կոնցեսիաները, դիմեց դիվանագիտական ճնշման եղանակների և, որպես գրանցից մեկը, առաջ քաշեց արևմտահայ տարագիրների հարցը: 1898 թ. Կ. Պոլսի իր դեսպան Ի. Ա. Ջինովևի միջոցով Ռուսաստանը պահանջեց Թուրքիայից ետ ընդունել հայ փախստականներին, որոնք Ռուսաստանում դեռ շարունակում են համարվել օսմանահպատակներ: Երբ սուլթանը մերժեց այդ պահանջը, պատճառաբանելով, թե փախստականներն իբր հեղափոխականներ են, 1899 թ. ռուսական կառավարությունն ավելի խիստ տոնով կրկնեց իր առաջարկությունը՝ պահանջելով անհապաղ լուծել հարցը<sup>17</sup>: Աբդուլ Համիդը փորձեց մասնակի զիջումով դուրս գալ իրավիճակից և հայտնեց, որ ինքը կարող է ընդունել միայն 1000 հոգու և տեղավորել Անատոլիայի խորքերում կամ Կրետեում, քանզի փախստականների հոգերի վրա արդեն հաստատված են քրդեր ու մուհաջիրներ, որոնց տեղաշարժելը կարող է, իբր, նոր արյունահեղությունների առիթ ծառայել: Ռուսական դեսպանը պատասխանեց, որ դա չի հետաքրքրում իր կառավարությանը և պահանջեց ետ ընդունել բոլոր փախստականներին:

Շարունակելով դիմադրել, բռնակալն առաջ քաշեց հարցի լուծման այլ եղանակ. նա պարտավորվեց Ռուսաստանին վճարել 100000 լիրա, սլայմա-

14 Մ. և Ս. Բ ղ ե յ ա ն. Հարազատ պամություն Տարոնոյ, էջ 175:

15 Նույն տեղում:

16 Տե՛ս РГИА, ф. «Թուրքական սեղան», 1899–1904, գ. 2477, թ. 18:

17 Նույն տեղում, ф. «Թուրքական նոր սեղան», 1899–1907, գ. 2479, թ. 135:

նով, որ տարագիրները մնան Կովկասում կամ, որ ավելի լավ կլինի, արտագաղթեցվեն Սիբիր և օգտագործվեն Հեռավոր Արևելյան երկաթուղու կառուցման աշխատանքներում: Ամբողջ մի տարի սակարկելով Զինովկի Հետ, սուլթանը հասցրեց այդ գումարը մինչև 160000 լիրայի և տեսնելով, որ չի հասնում արդյունքի, գերազասեց ընդունել կոնցեսիաների պահանջները, քան թույլատրել փախստականներին վերադառնալ Հայրենիք: 1900 թ. ապրիլի 2-ին կնքված Համաձայնագրով Թուրքիան պարտավորվեց ոչ միայն զիջել երկաթգծի կառուցման կոնցեսիաները, այլև շարունակել կանոնավոր կերպով վճարել 1877–1878 թթ. պատերազմից մնացած կոնտրիբուցիաները: Դրանից հետո ցարական կառավարությունը հրամայեց իր դեսպանին «այսուհետև չպնդել, որ Թուրքիան ետ ընդունի 1896 թ. իրադարձություններից Ռուսաստան փախած Հայերին»<sup>18</sup>:

Սակայն երկու բռնակալները արդեն վճռել էին արևմտահայ տարագիրների ճակատագիրը: Եվ երբ Կովկասի գլխավոր կառավարչապետ Գոլիցինն առաջարկեց փախստականներին ռուսահպատակություն ընդունել, նրանք պատասխանեցին, որ ցանկանում են վերադառնալ Հայրենիք: Զանց առնելով այդ ցանկությունը, Գոլիցինը 1901 թ. Հոկտեմբերի 1-ին ավելացրեց, որ նրանք ապրելու են միայն քաղաքներում, հողամաս կտանան 20 տարի հետո, իսկ 1903 թ. կզորակոչվեն բանակ: Երբ Հայերը դիմագրավեցին, Կովկասի ռուսական իշխանությունները 1902 թ. օգոստոսի 5-ին Հայտարարեցին, թե ովքեր մինչև նույն ամսի 10-ը կդառնան Թիֆլիսում, մեխանիկորեն կհամարվեն ռուսահպատակ և կզրանցվեն որպես քաղքենիներ (մեչչաններ): Օգոստոսի 6-ին տարագիրները հավաքվեցին ժողովի և որոշեցին ուղղություն վերցնել Թիֆլիսից դեպի թուրքական սահմանը, ենթադրելով, որ մեծ քանակով իրենց կհաջողվի մտնել Հայրենիք: Օգոստոսի 11–12-ին, շուրջ 800 մարդ զնացքով մեկնեց Կարս, իսկ հաջորդ օրն ավելի մեծ թվով փախստականներ հավաքվեցին Թիֆլիսի կայարանում, ցանկանալով միանալ նրանց: Սակայն ցարական իշխանությունները արգելեցին նրանց, իսկ Կարս հասածներին ձերբակալեցին ու բանտարկեցին: Ապա սկսեցին համոզել, որ հրաժարվեն Հայրենիք մեկնելու ցանկությունից ու ընդունեն ռուսահպատակություն, բայց արդյունքի չհասան: Չնայած ցարական պաշտոնյաների ձեռնարկած միջոցառումներին, Հայ տարագիրների թիվը Կարսում զնալով մեծացավ և օգոստոսի 24-ին հասավ 1000-ի:

Օգոստոսի 25-ին փախստականների առաջին խումբը, թվով 270 հոգի, շարժվեց դեպի թուրքական սահմանը, սակայն հանդիպեց ռուս-թուրքական սահմանապահ ջոկատների արգելքին: Տարագիրները դիմեցին էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսին և Կ. Պոլսի Հայոց պատրիարքին օժանդակություն խնդրելով: Սակայն նրանք պատասխանեցին, որ տարագիրները կա՛մ պետք է ընդունեն ռուսահպատակություն, կա՛մ Պարսկաստանի վրայով գաղտնի, մաս-մաս մտնեն Հայրենիք: Ընդունելով վերջին խորհուրդը, 120 փախստականներ Բաշկալեից ճամփա ընկան դեպի էջմիածն

18 РГИА, ф. «Թուրքական նոր սեղան», 1899, 1907, գ. 2479, թ. 228, տե՛ս նաև «Դրոշակ», 1899, № 6, էջ 70, 1900, № 2, էջ 24–25:

ծին: Բայց տեղ հասնելուն պես ձերբակալվեցին ցարական իշխանությունների կողմից, քշվեցին վերստին Կարս և փակվեցին Կաղզվանի բանտում:

Չգտնելով ուրիշ ելք, 1902 թ. սեպտեմբերի 23-ին փախստականները դիմեցին Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի արտաքին գործերի մինիստրներին: Նրանք գրում էին. «Մենք, Օսմանյան հպատակ Թուրքիայի հայերս, որ ստիպված էինք գաղթել 1894–1896 թվականների մեծ կոտորածների ժամանակ և ապաստան գտնել Ռուսաստանի հյուսիսային հողի վրա, թվով մոտ 40000–50000 հոգի՝ ներկա խնդրագրով աղերսում ենք... բարեհաճել մեզ օգնելու և հովանավորելու մեր ներկա սարսափելի և անտանելի վիճակին մեջ: Մենք ոճրագործներ չենք, մենք ոչ մի ոճիր չենք գործել, այլ հարկագրված ենք թողնել մեր մայրենի երկիրը՝ մղված միմիայն կոտորածների երկյուղից և թշվառությունից... Մենք չենք կարող օգտվել ռուս կառավարության վեհանաձև առաջարկությունից, ընդունել ռուսահպատակություն այն պատճառով, որ Տաճկաստանում մնացած մեր ընտանիքները հնար չունեն Ռուսաստանում մեզ հետ միանալու»: Ապա նշելով, որ Թուրքիան իրենց համարել է իր հպատակները և որպես այդպիսին յոթ տարի շարունակ հարկ վերցրել, սակայն այժմ, երբ ցանկանում են վերադառնալ հայրենիք, հրաժարվում է իր քաղաքացիները ճանաչելուց, տարագիրները գրում էին տերություններին՝ «Հանուն մարդասիրության միջնորդել բարեհաճելու մեզ համար Օսմանյան կառավարության առաջ, որպեսզի նա թույլատրե մեզ կրկին մտնել մեր մայրենի երկիրը, մեր ընտանիքի մոտ և թույլ տալ մշակել մեր դաշտերն ու հողերը»<sup>19</sup>:

Մենք չէրիտենք, թե ինչ պատասխանեցին անգլիական ու ֆրանսիական կառավարությունները: Հայտնի է, սակայն, որ ցարական կառավարող շրջանները Գոլիցինի պահանջով քննության առան տարագիրների խնդրագիրը: Այս կառավարչապետը, որ հռչակված էր իր հրեշավոր հայատյացությունամբ, 1903 թ. դիմեց ներքին գործերի մինիստրին, առաջարկելով՝ 1. արտաքսել արտասահման բոլոր այն գաղթականներին, որոնք հաստատվել են Ռուսաստանում 1901 թ. փետրվարի 1-ից հետո, 2. փակել Ռուսաստանի սահմանները արևմտահայերի առաջ, ներս չթողնելով անգամ անցագիր ունեցողներին, 3. միջոցներ մշակել տեղափոխելու կայսրության ներքին նահանգները նրանց, ովքեր հաստատվել են Ռուսաստանում մինչև 1901 թ. փետրվարի 1-ը: Իր առաջարկությունները Գոլիցինը հիմնավորում էր նրանով, որ արևմտահայերը, լցված լինելով հայկական թագավորության վերականգնման տենչերով, կարող են վարակել ոչ միայն արևելահայերին, այլև Կովկասի մյուս ժողովուրդներին և տահաճություն պատճառել ռուսական կառավարությանը<sup>20</sup>:

1904 թ. Կովկասի գլխավոր կառավարչապետի այս առաջարկությունները լուրջ առարկությունների հանդիպեցին Մինիստրների խորհրդում: Արտաքին գործերի մինիստրը և Կ. Պոլսի ռուսական գեսպանը գտան, որ Թուրքիան նախ չի ընդունի փախստական հայերին և ապա՝ նրանց արտաքսումն արտասահման խիստ անմարդկային կլինի. չի կարելի այդ

19 «Հնչակ», 1902, №5, էջ 39, տե՛ս նաև «Դրոշակ», 1902, №9, էջ 133:

20 Տե՛ս Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. 560, ց. 22, գ. 282, թ. 2:

կերպ վարվել մի ժողովրդի նկատմամբ, որն իր ազատության հույսերը կապել է Ռուսաստանի հետ<sup>21</sup>: Խորհրդի մյուս անդամները նշեցին, որ Գուլիցիների առաջարկությունը հնարավոր է միայն տեսականորեն, բայց ոչ դործնականորեն: Կարծիքների ձևական ու լարված փոխանակությունից հետո մինիստրները եկան հետևյալ եզրակացություն. 1. ընդունել այն հայերին, որոնք հաստատվել են Կովկասում 1893 թ. հետո և ցանկանում են մեկնել արտասահման, 2. ընդառաջել նաև այն հայերին, որոնք ցանկանում են տեղափոխվել կայսրության ներքին նահանգները, թողնելով տեղափոխման ծախսերը իրենց վրա, 3. թույլատրել մնացած հայերին ապրելու Կովկասում, բացառությամբ Երևանի նահանգից ու Կարսի մարզից, այսինքն՝ Արևելյան Հայաստանից, գտնելով, որ հավաքական հայության առաջացումը Անդրկովկասում կարող է անհանգստություն պատճառել կառավարությանը, 4. Կովկասում հաստատված հայերին բաժնեհոգ տալ 20 տարի հետո<sup>22</sup>:

Մերժելով, մի կողմից, տարագիրների վերադարձը հայրենիք, Աբդուլ Համիդը, մյուս կողմից, արգելակում էր Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի հայ դյուղացիների տեղաշարժերը երկրի ներսում: Համաձայն նրա սահմանած օրենքի, այդ դյուղացիները առանց տեղական իշխանությունների թույլտվության իրավունք չունեին մեկնել գյուղից գյուղ կամ դյուղից քաղաք: Ժամանակակիցներից մեկն այդ առթիվ գրում էր. «Սեկ գեղեն մյուս գյուղն անցնիլը պետութենե մը ուրիշ պետություն անցնելու չափ դժվարություն հետ էր կապված»<sup>23</sup>: Բռնակալը դյուղացիների տեղաշարժերը հսկելու համար յուրաքանչյուր հայկական գյուղում նշանակեց հատուկ հսկողներ՝ ղոլջիներ և պարտագրեց բնակիչներին ապահովել նրանց կյանքի անվտանգությունը, կերակրել ու սլահել իրենց միջոցներով: Նա փաստորեն բանտարկեց արևմտահայ դյուղացիներին իրենց բնակավայրերում և այդպիսով Արևմտյան Հայաստանը, ինչպես կասեր Հ. Պարոնյանը, դարձրեց բանտ բանտի մեջ<sup>24</sup>:

Սուլթանի այդ միջոցառումը, անշուշտ, ուղղված էր առաջին հերթին արևմտահայ ազգային ազատագրական շարժումների դեմ: Նա կարծում էր, որ այդ արգելակումով կխանդարի արևմտահայերի համախմբումը, հեռու կպահի նրանց հեղափոխական գաղափարներով տոգորված կենտրոններից.

21 Նույն տեղում, թ. 3:

22 Նույն տեղում, թ. 19:

23 Բ. Տ ե ը - Մ ի ն ա ս յ ա ն. Հայ հեղափոխականի մը հիշատակները, մաս 'Ի. Խեհ-րան, 1982, էջ 189-191:

24 1901 թ. էրզրումի գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ հայերը, կազմելով 20-30 հոգուց բաղկացած խմբեր, մահմեդական ուղեկիցների (վեյեզների) առաջնորդությամբ փախչում են իրենց երկրից: Սակայն սլաշտոնյաները հետապնդում են նրանց և ետ բերելով տանջանքների ենթարկում. «Վերջերս գինվորները որսալով փախչող հայերից մի քանիսին, փակեցին Հասան Կալիի բանտում, իսկ հետո այնպես ծեծեցին, որ երկուսը մահացան» (ՔՂԱ, Ֆ. «Քաղաքիսիվ», 1901, դ. 1637, թ. 61): 1902 թ. օգոստոսին «Դրոշակը» գրում էր, որ Խարբերդի դաշտում «ոստիկանությունը, լուր առած ըլլալով, թե խանգեղցի ծանոթ թուրք ջորեպան մը նորեն փախստականներ կը տան՝ փութով հեծյազորքեր ու փոխս փոխսներ մը ղրկեց Մայաթիեն անդին, ուրկե 40 դյուղացիներ ձերբակալելով ետ պարձուցին: Տեսնելու էր այն ողբալի, այն վերին աստիճանի թշվառությունը, որ կը ծածկեր գանոնք և այն հուսահատությունը, որ դրոշմված էր անոնց դեմքերուն վրա: Խումբը կանց առավ կառավարական շենքին առջև, հոն այդ թշվառները սկսան «հա՛ց, հա՛ց կուզենք մեր զավակներուն» աղաղակել» («Դրոշակ», 1902, №9, էջ 137):

Հատկապես արտասահմանից և կապահովի նրանց ղանգվածային բնաջնջումն ու ուժացումը:

Սակայն 1905 թ. սուլթանը փոխեց այդ քաղաքականությունը և արևմտահայերի բնաջնջումը փորձեց իրագործել նրանց մասսայաբար արտասահման, գլխավորապես Ռուսաստան արտաքսելով: Դեռ 1905 թ. սոյնեմբերի սկզբներին նա թուլյատրեց կաթոլիկ Հայերին մեկնել արտասահման, իսկ 1906 թ. սեպտեմբերի առաջին կեսերին այդ թուլյատվությունը տվեց նաև լուսավորչական Հայերին<sup>25</sup>: Ընդ որում բռնակալը հրահանգեց տեղական պաշտոնյաներին, որ մեկնածուների անձնագրերում նշվի «առանց թուրքիա վերադառնալու իրավունքի»<sup>26</sup>:

Օգտվելով սուլթանի այդ թուլյատվությունից, բազմաթիվ արևմտահայեր պատրաստվեցին թողնել իրենց համար արգեն գոթիք գարձած հարազատ վայրերը և մեկնել Ռուսաստան: Սակայն Աբգուլ Համլիզը հենց նույն թվի աշնանը կանխեց նրանց արտագաղթը, հավանական է ղեկավարվելով այն գիտակցությամբ, որ երկիրը կամայանա, քանզի մեկնող Հայերի փոխարեն Հաստատված մահմեդականները չեն կարող լցնել առաջացած բացը: Վ. Շիրկովը 1906 թ. դեկտեմբերի 10-ին գրում էր, որ Թիֆլիսի իշխանություններն արտագաղթի բազմաթիվ ցանկություն հայտնող Հայերից բավարարեցին քչերին միայն, քանի որ Կ. Պոլսից հրաման ստացան «ոչ պաշտոնական կարգով ետ պահել Հայերին արտագաղթից»<sup>27</sup>: Հյուսիսայտոսն, ապա, շարունակում էր. «Բարձրագույն Դռան այս շտապողականությունը, որով հրաժարվեց հենց նոր ձեռնարկած միջոցառումից (այսինքն արտագաղթի թուլյատվությունից – Ա. Հ.), բացատրվում է այն նկատառումով, որ օսմանական կառավարության համար, հավանական է, ձեռնտու չի գրկվել Հայերից, որոնք հանգիստանում են նրա գլխավոր հարկ ու տուրք վճարողները և գավառում յուրաքանչյուր կառույցներում ու ճանապարհների վրա եզակի աշխատողները»<sup>28</sup>:

1906 թ. վերջերին սուլթանը կարգադրեց արտագաղթի իրավունք տալ առայժմ միայն «ամենահանգիստ Հայերին»<sup>29</sup>, այսինքն հեղափոխական ու աղատասիրական տրամադրություններով առավել տոգորվածներին: Ղեկավարվելով բռնակալի այդ ցուցումով, տեղական իշխանությունները 1907 թ. սկզբներին հավաքեցին մի բաղմունքից և ուղարկեցին գեսլի ոռոսական սահմանը: Բայց ցարական սահմանապահ ջոկատները կտրականապես մերժեցին ընդունել նրանց:

Բանն այն է, որ ոռոսական կառավարող շրջաններն այնուամենայնիվ չէին ցանկանում տեսնել Արևմտյան Հայաստանը հայազրկված, որովհետև օգտագործում էին արևմտահայերի ոռոսական կողմնորոշումը և նրանց միջոցով ամրապնդում իրենց գիրքերը Փոքր Ասիայում: 1907 թ. ապրիլի 24-ին էրզրումի ոռոսական գլխավոր հյուսիսայտոս Ն. Սկրյաբինը գրում էր. «Ռուսաստանի հետ սահմանակից վիլայեթների աղատումը քրիստոնեա-

25 РГИА, ф. «Քաղաքիկ», 1905, ց. 488, դ. 1641, թ. 33, 1906, ց. 482, դ. 540, թ. 194:

26 Նույն տեղում, ֆ. «Քաղաքիկ», 1907, դ. 1643, թ. 30:

27 Նույն տեղում, 1906, ց. 482, դ. 540, թ. 239:

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում, 1907, դ. 1643, թ. 33:

կան տարրերից զգալիորեն կբարդացնի և կդժվարացնի այնտեղ մեզ համար անհրաժեշտ ազգեցության զարգացումը»<sup>30</sup>: Այդ իսկ նկատառումով գլխավոր հյուպատոսը դեռ 1907 թ. հունվարին գիմեց ռուսական սահմանապահ իշխանություններին, պահանջելով «ձեռնարկել եռանդուն միջոցներ և թույլ չտալ մեր սահմանը անցնելու ոչ մի հայի»<sup>31</sup>: Ապա զայրանալով էրզրումի կուսակալի վարքագծից, Կ. Պոլսի իր դեսպանին ուղարկած զեկուցագրում նշում էր. «Կարծես թե Ռուսաստանը թուրքերի համար աքսորավայր է»<sup>32</sup>:

էրզրումի կուսակալ Նուրի բեյը, լսելով, որ Ն. Սկրյաբինը արգելում է հայերի մուտքը Ռուսաստան, սկզբում փորձեց «լեզու գտնել» նրա հետ, բայց չհասնելով արդյունքի, բռնեց ստախոսության ճամփան. հայտարարեց գլխավոր հյուպատոսին, թե իբր իրենց գեսպանը Պետերբուրգում բանակցել է արտաքին գործերի մինիստր Լամսդորֆի հետ և ստացել նրա համաձայնությունը: Մինչդեռ, ինչպես նշում էր Ն. Սկրյաբինը, Լամսդորֆը ոչ միայն չի համաձայնել, այլև սկզբունքորեն գեմ է եղել արևմտահայերի ներգաղթին դեպի Ռուսաստան<sup>33</sup>: 1907 թ., երբ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի պաշտոնը սկսեց վարել Իզվոլսկին, Նուրի բեյը վերստին փորձեց խաբել Ն. Սկրյաբինին, թե նոր մինիստրը խոստացել է Պետերբուրգի թուրքական դեսպանին՝ ընդունել վերջին 10 տարում Ռուսաստանում և Պարսկաստանում գազտնի կերպով եղած, բայց արգեն թուրքիա վերադարձած բոլոր հայերին<sup>34</sup>: Սակայն գլխավոր հյուպատոսը նրան պատասխանեց. «Անվերապահորեն կենթարկվեմ մինիստրի հրամանին, հենց որ ստանամ այն»<sup>35</sup>:

Ն. Սկրյաբինի ահազանգումներից անհանգստացած՝ Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Ա. Զինովևը 1907 թ. հունիսի 9-ին այցելեց Աբդուլ Համիդին և դժգոհություն հայտնեց էրզրումի կուսակալի վերոհիշյալ վարքագծից: Սուլթանը, սակայն, արտաքսումների մեղքը բարդեց հայերի վրա և, ցանկանալով պաշտպանություն ստանալ Ռուսաստանից, հայտարարեց, որ քանի դեռ ռուսական քաղաքականությունը թուրքիայում վարում էր հանգուցյալ իշխան Ռոստով-Լոբանսկին, իր համար ավելի հեշտ էր լուծել հայերի հետ կապված կնճռոտ հարցերը, այսինքն՝ սաստկացնել նրանց հայաժանքները<sup>36</sup>:

Զինովևի այցելությունից հետո էրզրումի կուսակալը թեպետև ետ կանդնեց իր պնդումներից, բայց արևմտահայերի վիճակը շարունակեց վատանալ: Դրությունից գուրս գալու համար նրանք 1906–1908 թթ. սկսեցին զանգվածաբար դիմել Ն. Սկրյաբինին և խնդրել ցարի հովանավորությունն ու պաշտպանությունը: Էրզրումի վիլայեթի Դիվնիք գյուղի բնակիչներն, օրինակ, գրում էին. «Առ ի հպատակություն Ռուսիոյ մեծա-

30 Նույն տեղում, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1907, գ. 2675բ, թթ. 110–111:

31 Նույն տեղում, թ. 51:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում, ֆ. «Քաղաքիսիվ», 1907, ց. 482, գ. 715, թթ. 42, 67:

35 Նույն տեղում, թ. 52:

36 Նույն տեղում, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1907, գ. 2675բ, թ. 51, ֆ. «Քաղաքիսիվ», 1907, ց. 482, գ. 715, թ. 41:

հզոր կառավարութեան, որ սուլայն գյուղիս մեջ գտնված քրիստոնյա ժողովուրդքս ի միասին համամիտ լինելով կը ցանկանամք նորին բարեխնամ կառավարութեան հովանույն տակ հովանավորվիլ, հանգիստ կյանք մը վարելու համար»<sup>37</sup>: Նույն վիլայեթի Արշուն, Սեկյուլթու, Մերդիկլիկ, Բլուր, Կեզ, Թուվանջ, Ինձք, Դինարիգոմ, Իգդաձոր գյուղերի բնակիչները նշում էին, որ եթե ցարը հրաժարվի իրենց հովանավորելուց, ապա իրենք հարկադրված կլինեն մոռանալ մայրենի լեզուն, ուրանալ քրիստոնեությունը և դառնալ մահմեդականներ: Նրանք գրում էին. «Տեր, ազատե մեզ այս մարմնավոր գերութենե, կը խնդրեմք ընդունեցեք հպատակութեան, իսկ եթե չընդունենք... այն աստիճան ճարահատյալ հուսահատ ենք, որ մահմեդականություն կրոնափոխությունը ընդունելու վիճակին հասած ենք»<sup>38</sup>: 1907–1908 թթ. նման ցանկութեամբ գիմեցին ցարին նաև էրզրումի վիլայեթի մի շարք այլ գյուղեր, որոնց տված հայերեն խնդրագրերը այսօր էլ խնամքով սլահպանվում են Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան արխիվում<sup>39</sup>:

Սակայն էրզրումի գլխավոր հյուպատոսը մերժում էր արևմտահայերի խնդիրները, հրաժարվում անդամ դիմումներն ընդունելուց, արգելում նրանց մուտքը ոռուսական հյուպատոսարան: 1907 թ. փետրվարի 24-ին նա գրում էր Ի. Ա. Ջինովևին. «Հայերը դեռ շարունակում են գանգատվել իրենց դառն կացությունից և չնայած արդելված է նրանց մուտքը գլխավոր հյուպատոսություն ու կտրականորեն պատասխանած, որ անհնարին է ճանաչել իրենց ոռուսահպատակներ, այնուամենայնիվ շարունակում են բերել նոր խնդրագրեր, որոնք իմ հրամանով ետ են վերադարձվում կամ պարզապես չեն ընդունվում»<sup>40</sup>: Նույն թվի ապրիլի 4-ին նա շարունակում էր, թե չնայած իր այդ կարգադրության, օր չի անցնում, որ հայերը չգան հյուպատոսություն և չտան նոր խնդրագրեր: Նրանց բացատրվում է, որ անհնարին է կատարել իրենց խնդրանքները. «Ոմանք ենթարկվում են և խորապես հիասթափված հեռանում, իսկ մյուսները գայրանում են մերժումից, շարունակում են խնդրագրերը գրասենյակում և գնում, նզովելով բախտին»<sup>41</sup>: Եվ այնուամենայնիվ էրզրումի ոռուսական գլխավոր հյուպատոսը գտնում էր, որ պետք է մտահոգվել արևմտահայերի հարցով: 1907 թ. ապրիլի 4-ին Ջինովևին ուղարկած իր վերոգրյալ զեկուցադրում նա նշում էր, որ թուրքերը կարծում են, թե 90-ական թվականներին քիչ են կոտորել, այժմ նախապատրաստվում են բոլորին կոտորել: Ուստի դեսպանի ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որ անհրաժեշտ է կուսակալ Նուրի բեյին տալ կտրուկ հրաման, որ արգելի մահմեդական ֆանատիկ բնակչության հակահայկական դործունեությունը և պատժի անհնադանդներին. «Միայն այդ ճանապարհով կարելի է կանխել արդեն օդից կախված աղետը»<sup>42</sup>:

37 Նույն տեղում, ֆ. «Կ. Պոլսի գեսպանությունը», 1908, գ. 1595, թ. 70:

38 Նույն տեղում, 1907, գ. 2675բ, թ. 21:

39 Նույն տեղում, ինչպես և գ. 1595:

40 Նույն տեղում, ֆ. «Կ. Պոլսի գեսպանությունը», 1907, գ. 2675բ, թ. 49:

41 Նույն տեղում, թթ. 115–116:

42 Նույն տեղում, թ. 120:

Սուլթան Համիդը իր հայաջինջ քաղաքականութունն իրագործում էր նաև պարբերական ջարդեր ու կոտորածներ կազմակերպելով: Նրա սատորակները կոտորում էին հայերին հաճախ առանց որևէ պատրվակի: Այդպես վարվեցին նրանք, օրինակ, 1900 թ. ամռանն ու աշնանը, երբ բարբարոսաբար ավերեցին Սասունի Եղկարթ, Ձորեր, Կոզհովիտ, Կելտող, Նոսնուտ, Խթան, Սպաղանք, Ձիրենք, ինչպես նաև Դիարբեքի Ռարակիրի. Երզնկայի ու Վանի մի շարք դյուզերը<sup>43</sup>:

Սուլթանի դահիճներն արևմտահայ բնակիչներին կոտորում էին նաև զենքեր փնտրելու կամ հայտնաբերելու պատրվակներով: Նրանք այնպիսի տանջանքներ ու չարչարանքներ էին գործադրում, որ գյուղացիները դրանցից ազատվելու համար հաճախ դավաճ զենքեր էին գնում ու հանձնում: Ովքեր անկարող էին այդ անել, ոճրագործների կողմից ձերբակալվում էին ու անորոշ ժամանակով փակվում բանտում: 1900 թ. միայն 2–3 ամսվա ընթացքում այդ հողի վրա ձերբակալվեցին շուրջ 2000–2500 հայեր<sup>44</sup>:

Հաճախ պատճառաբանելով, թե հայերը հայդուկներ են թաքցնում, թուրքական հրոսակները ներխուժում էին հայկական դյուզերը, խուզարկում տները և հաշվհարգար տեսնում բնակիչների հետ: Շատ անգամ նրանք ավերում էին այնպիսի գյուղեր, որոնք բոլորովին չէին տեսել ֆիդայիներ: Աղբյուրների և գրականության մեջ բազմաթիվ փաստեր կան համիդյան իշխանութունների նման վարքագծի մասին: Բերենք դրանցից դոնե մի քանիսը: 1898 թ. ամռանը Ալի բեյը Աղբյուր Սերոբին հետապնդելու պատրվակով արշավեց Մուշի Դատվան, Ջրհոր, Շամիրամ, Ուրտափ, Նախրե, Ծվատ, Պոռ, Կամախ, Փափչեն և Ախլաթի Ծորկոկ, Կծվանք, Ծղակ, Հաղաղ, Փրխուս, Մեծք, Տապավանք, Ռեդաթ, Կամուրջ, Կոչտիան, Սոխորդ և այլ դյուզեր ու սոսկալի տանջանքների ենթարկեց բնակիչներին<sup>45</sup>: Նրա գինվորները քրդական խաժամուժի հետ շիկսցած թասեր էին հազցնում գյուղացիների դուռներին, հանում էին նրանց աչքերը, կտրում ականջները, ջարդում ատամները, խարանում մարմինները, լլկում կանանց ու տանջամահ անում: Դահիճներն ավելի դաժան վարվեցին Սերոբի համադյուզացիների սոխորդացիների հետ: Նրանք ամբողջ գյուղը տակն ու վրա արեցին, խոշտանգեցին ու սպանեցին շատերին: Կենդանի մնացին սոսկ նրանք, ովքեր փախան, թաքնվեցին հարևան գյուղերում կամ լեռներում<sup>46</sup>:

1900 թ. սուլթանի հրոսակները թալանեցին Մուշի գավառի Ցրոնք, Բերգակ, Առազ, Դերքիվանք, Սուլուխ, Խըզըլխազ, Կելիկուլյան, Սպաղանք և այլ դյուզեր ու կոտորեցին բնակիչներին<sup>47</sup>: 1904 թ. փետրվարին նրանք ավերի ենթարկեցին նույն գավառի Հունտն գյուղը, քրդական զանդվածների հետ «մտան տներու մեջ և սկսան կողոպուտն ու բռնարա-

43 «Դրոշակ», 1900, №10, էջ 145, 1901, №1, էջ 28:

44 Ռ. Տ ե Ր - Մ ի ն ս յ ա ն. նշվ. աշխ., մաս. Գ, էջ 337:

45 «Դրոշակ», 1899, №10, էջ 149:

46 «Դրոշակ», 1898, №9, էջ 80:

47 «Դրոշակ», 1901, №1, էջ 26:

րումները»<sup>48</sup>: Այդ թվի սեպտեմբերին նրանք նույն բախտին արժանացրին նաև Նարեկը, ուր ավերեցին 100 տուն և սպանեցին ու վիրավորեցին շուրջ 40 մարդ<sup>49</sup>: Թուրքական ոճրագործները տարբեր ժամանակներում ավերեցին նաև Ցրոնք, Ալվառինը, Հալս և մի շարք այլ գյուղեր<sup>50</sup>:

1901 թ. սեպտեմբերի 20-ին Կ. Պոլսի ուսուսական դեպսյան Զինովևը գրում էր, որ իշխանութիւնները կոտորում են Հայերին, պատճառաբանելով, թե նրանք իբր «իրենց հեղափոխական դործելակերպով խախտում են անդորրը»: Մինչդեռ «Փոքր Ասիայի Հայ բնակչության ղանդվածները այնպես են ահաբեկված 1894–1896 թթ. իրադարձութիւններից, որ չեն էլ համարձակվում մտածել հեղափոխական շարժումների մասին: Նրանք ամբողջապես ընկղմված են իրենց սեփական անվտանգութիւնը պաշտպանելու հոգսերի մեջ ... Թուրքական կառավարութիւնը դիտակցաբար ձգտում է կամ ազատվել Հայերից, կամ դնել նրանց այնպիսի վիճակում, որ դառնան քրդերի լուռ ու մունջ ստրուկները»<sup>51</sup>:

Նույն բանն էր հաստատում նաև Բիթլիսի ուսուսական Հյուպատոս Վ. Շիրկովը, որը 1904 թ. հունիսի 16-ին հաղորդում էր, որ թուրքական իշխանութիւնների պայքարը հայդուկների դեմ «ընթանում է անարգար բռնութիւններով խաղաղ բնակչության նկատմամբ: Պատճառաբանելով, թե վերջիններս իրենց մոտ թաքցնում են հեղափոխականներ, գորքերը հրդեհում են գյուղերը, թալանում են և նույնիսկ սպանում գյուղացիներին: Միայն մեկ գյուղում նրանք սպանեցին 25 հոգու: Անպաշտպան բնակիչները զանգվածներով ձգվում են Մուշ: Վերջին ժամանակներս դրանց թիվը հասավ 5500 մարդու: Բոլոր փախստականները խիստ կարիքի մեջ են»<sup>52</sup>: Նույն թվի օգոստոսի 18-ին իր զեկուցագրում Հյուպատոսը նշում էր, որ հայկական հալածանքների ու կոտորածների գործում իշխանութիւններին եռանդով օգնում են համիդիեական զնդերը<sup>53</sup>: 1906 թ. հոկտեմբերի 7-ի զեկուցագրում Վ. Շիրկովը, անգրադառնալով հայերի պարբերական ջարդերին և թուրքական իշխանութիւնների վարքագծին, մեջ էր բերում սուլթանի գահիճներից մեկի այն ցինիկ հայտարարութիւնը, թե «ամեն մի սպանված Հայ Ֆեդայի է»<sup>54</sup>:

Աբդուլ Համիդը հալածում ու հետապնդում էր նաև արևմտահայերի լուսավորութիւնն ու կուլտուրան: Նա արտամղեց դպրոցներից այն բոլոր առարկաները, որոնք կարող էին «մտքեր գրդուել», դպրոցները դրվեցին տեղական իշխանութիւնների հսկողութիւնի տակ: Ամեն մի կասկածի դեպքում դրանք փակվում էին, իսկ ուսուցիչները և աշակերտները նետվում բանտ կամ լավագույն դեպքում հեռացվում: «Հնչակ»-ը հաղորդում էր, որ Բայազետի և Խնուսի գավառներում թուրքական պաշտոնյաները հալածում են Հայ ուսուցիչներին, պատճառաբանելով, որ իբր նրանք հեղա-

48 «Դրոշակ», 1904, № 2, էջ 19:

49 РГИА, ф. «Քաղաքիսիվ», գ. 718, թ. 3, տե՛ս նաև՝ «Դրոշակ», 1905, № 4, էջ 56:

50 «Դրոշակ», 1899, № 8, էջ 121, 1906, № 4, էջ 53, 1907, № 6–7, էջ 93:

51 РГИА, ф. «Քաղաքիսիվ», 1901, ց. 482, գ. 711, թ. 18:

52 Նույն տեղում, ֆ. «Քաղաքիսիվ», ց. 482, գ. 538, թ. 8:

53 Նույն տեղում, ֆ. «Կ. Պոլսի դեպսյանութիւնը», գ. 1399, թ. 83:

54 Նույն տեղում, ֆ. «Քաղաքիսիվ», գ. 540, թ. 206:

փոխություն են քարոզում: Չբավարարվելով դրանով՝ նրանք գրգռում են թուրք երեսաներին հայերի գեմ, սովորեցնում, որ ծեծեն, եթե հայ երեսաները հաճախեն դպրոց: Թերթն այնուհետև նշում էր, որ պաշտոնյաներն այդ կերպ են վարվում նաև Բիթլիսի, Մուշի և Էրզրումի գավառներում: Սուլթանի վարած քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում դպրոցների թիվն անբավարար էր: 1903 թ. Հ. Առաքելյանը գրում էր. «Մուշի 104 գյուղերից միայն 23-ը դպրոց ունի, իսկ ամբողջ գավառները նույնիսկ դպրոցներ չունեն: Հետևաբար, ամենևին սխալած չենք լինի, եթե ասենք, որ Թուրքիայի հայ ազգաբնակչության հազիվ մի չորրորդ մասը ուսում է ստանում»<sup>56</sup>:

Բռնակալը խստացրեց հատկապես գրաքննությունը: Խստորեն կրճատվեց թերթերի ու ամսագրերի թիվը, արգելվեց արտասահմանում լույս տեսնող հայ առաջադեմ գրականության մուտքը Թուրքիա և Արևմտյան Հայաստան: Գործածությունից հանվեցին այնպիսի բառեր, ինչպիսիք էին «ազատություն», «հավասարություն», «իրավունք», «գեսպոտիզմ», «տիրան», «սահմանադրություն», «հանրապետություն», «հեղափոխություն» և այլն: Հանվեցին նաև «դարուն» ու «վերածնունդ» բառերը, ենթադրելով, որ դրանք կարող են սիմվոլիկ նշանակություն ունենալ: Համիդյան վայրագ ու բթամիտ գրաքննիչներն արգելեցին կարգալ Ռուսոյին և Վոլտերին, Շեքսպիրին ու Շիլլերին, Հյուգոյին ու Ջուլյային, Տոլստոյին և Բայրոնին, Ռասինին ու Կոռնելին, փականքի տակ դրեցին «Համլետ»-ը, «Վենետիկի վաճառական»-ը և բազմաթիվ այլ հոյակապ ստեղծագործություններ<sup>57</sup>: Նրանք թույլ չտվին Եվրոպայից ներմուծելու անգամ քիմիայի դասագրքերը, որովհետև նրանցում եղած ջրի ֆորմուլան (H<sub>2</sub>O) վերծանեցին Համիդ II-ը հավասար է գերոյի:

Սուլթան Համիդը մի շարք շրջաններում փակեց հայկական եկեղեցիները, քանդեց կամ ախոռի վերածեց հնամենի վանքերի մի մասը, հարկադրեց քահանաներին գոհի ծխով լի խորանների առաջ չոքած աղոթել մահիկի համար: Ոգեշնչված այդ քաղաքականությամբ, թուրքական պաշտոնյաներն ու քրդական աղաներն ավելի սաստկացրին արևմտահայերի կրոնական ճնշումները: Նրանք պղծում էին հայոց սրբություններն ու ուխտատեղիները, արգելակում էին հարսանիքներն ու տոնակատարությունները, թույլ չէին տալիս կատարելու կրոնական ծիսակատարությունները, խանգարում էին անդամ հանգուցյալների հանդիսավոր թաղումներին և այլն<sup>58</sup>:

Չտանելով ստեղծված գծնդակ պայմանները, արևմտահայերի մի մասը թողնում էր տուն ու տեղ, դառնում թափառաշրջիկ և դիմագրավում բռնություններին: Արամ Մանուկյանը իր հուշերում գրում էր, որ XX դ. սկզբին Մուշում ու Սասունում «փախստականները հարյուրներով էին հաշվվում և թափառում էին այս ու այն շրջանները. ամիս չէր անցնում,

55 «Հնչակ», 1907, № 2, էջ 22:

56 «Մշակ», 1903, № 106:

57 Ю. А. Петросян. Младотурецкое движение. М., 1971, с. 157—161; Г. З. Алияев. Նշվ. աշխ., էջ 52—56.

58 РГИА, ф. «Քաղաքիսիվ», 1906, ց. 482, գ. 714, թ. 35:

որ փախստականների խմբերի և կառավարութան գորքերի կամ ոստիկանութան հետ ընդհարումներ չպատահեին»<sup>59</sup>:

Արևմտահայերի մի մասն էլ բռնում էր միգրացիայի ճամփան և իշխանութունների թուլլտվությամբ գաղթում առավելապես դեպի Մոսուլի ու Դիարբեքի սակավաբնակ վայրերը: 1908 թ. հունվարին մի հաղորդման մեջ նշվում էր, որ «Բիթլիսի, Մուշի ու Սասունի շրջաններից 5000-ե ավելի գաղթականներ եկած են հոս (իմա՝ Դիարբեքիը – Ա. Ն.) ծայր աստիճան աղքատ և թշվառ, որոնց մահվան ճիրաններն ազատելու համար գերմարդկային... ջանքեր են հարկավոր»<sup>60</sup>: Գաղթականները տկոր ու սոված, անօթևան ու ընկճված թափառում էին քաղաքի փողոցներում, ողորմություն խնդրում եկեղեցիների դռներին: Բախտավոր էին համարվում նրանք, ովքեր ձեռք էին բերում մի կտոր հաց կամ «ախոռի մը անկյուն գտած անասունների շնչով կրտաքնան»<sup>61</sup>: Բացի նշված վայրերից, հայերը իշխանութունների թուլլտվությամբ տեղաշարժվում էին նաև դեպի Հայոց Զոր, Բաշկալե, Թեմար, Դավաշ, Մոկս, Ապաղան, Վանի սանջակ և այլն<sup>62</sup>:

Արևմտահայերի մի ուրիշ մասը, հաղթահարելով համիդյան պատնեշները, փախչում էր դեպի արտասահման, դեպի Ռուսաստան: 1901 թ. «Դրոշակ»-ը գրում էր, որ մշեցիները «ամեն 6–7 օր գաղտնի ճամփորդությամբ փախուստ տալով, կանցնեն սահմանը... Կովկասը լիքն է 4000–5000 մշեցի դարձրածներով»<sup>63</sup>: Արևմտահայերը փախչում էին դեպի Եվրոպա ու ԱՄՆ: 1899–1908 թթ. ընթացքում Թուրքիայից, առավելապես Խարբեքի վիլայեթից ԱՄՆ են գաղթել 17882 հայ, որոնցից 13001 տղամարդ, 4881 կին<sup>64</sup>: Եթե 90-ական թվականներից առաջ հայերը մեկնում էին արտասահման իրև պանդուխտներ, կրկին հետ վերադառնալու նպատակով, ապա XX դ. սկզբին «փախչում էին առհասարակ»<sup>65</sup>: Հայերի արտագաղթի ու փախուստի հետևանքով մի շարք վայրեր ամայացան և համալրվեցին նոր իսլամական զանգվածներով: Այգալիսի վայրերից էին Խուլթի, Բունաշենի, Գինգի, Մառաշգուլթի, Ճապաղջուրի, Սասունի ու Մուշի մի քանի շրջանները, ուր գարերով մշակվող դաշտերը վերածվեցին խոպանների և արոտավայրերի<sup>66</sup>:

Արևմտահայերի մի մասն էլ հավատափոխվեց, ընդունելով մահմեդականություն: Այգալես վարվեցին հատկապես Բուլանըխի, Գինջի, Ճապաղջուրի, Զքթեի, Փեգարի, Սասունի, Խիզանի, Մուշի, Արարկիլի, Խարբեքի, Դիարբեքի և Վասպուրականի բազմաթիվ գյուղեր<sup>67</sup>: Միայն Վասպուրականում, ըստ «Հնչակ»-ի 1901 թ. տվյալների, իսլամացած հայերի թիվը

59 «Հայրենիք», 1923, №11, էջ 136, տե՛ս նաև Ռ. Տ ե Ր - Մ ի ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., մաս 9, էջ 120:

60 «Դրոշակ», 1908, №2, էջ 27:

61 «Դրոշակ», 1907, №6–7, էջ 94:

62 «Մուրճ», 1904, №4, էջ 27, «Դրոշակ», 1902, №5, էջ 70, «Աշխատանք», 1912, №26–73, էջ 6, 1913, №24–120, էջ 6, Մ ա լ խ ա ս. Ճամբուս վրա. հ. Ա, էջ 45–47:

63 «Դրոշակ», 1901, №3, էջ 54:

64 «Դրոշակ», 1902, №9, էջ 137–138:

65 «Դրոշակ», 1896, №8, էջ 1:

66 «Դրոշակ», 1905, №2, էջ 21–22, 1906, №2, էջ 21, 1903, №2, էջ 25:

67 РГИА, ф. «Քաղաքիսիվ», 1908, ց. 482, գ. 542, թ. 50, «Մշակ», 1897, №25, «Դրոշակ», 1901, №1, էջ 25:

կազմում էր «մոտավորապես 10–12 հազար»<sup>68</sup>, իսկ Բռնաշենի. Խուլթի և Մոտկանի 45 հայկական գյուղերից յուրաքանչյուրում, «Դրոշակ»-ի հավաստիացմամբ հազիվ մնացել էին «առավելն 3–15 տուն հայեր»<sup>69</sup>: Դանիացի ճանապարհորդ Բենրգսեն 1890-ական թվականների վերջերին, լինելով Արևմտյան Հայաստանում, գրում էր, որ Դիարբեքիում. Խարբերդում և Արաբկիրում «երկու հարյուր հայ լուսավորչական գյուղեր մահմեդականութուն են ընդունել կոտորածներից հետո, և այժմ հայոց եկեղեցիները մզկիթների փոխած քահանաների տեղը մոլլաներ են երգում սրանց մեջ»<sup>70</sup>: Հնարավոր է, որ այստեղ լինի որոշ չափազանցություն, բայց կասկածից վեր է, որ Համիդի կառավարման վերջին 10–15 տարիներում մահմեդականացվող հայերը կազմում էին զգալի թիվ:

Ուշագրավ է, որ հայկական որոշ զանգվածներ հարելով մահմեդականությանը, շարունակում էին իրենք քրիստոնյաներ, իսկ մյուս մասը իրենք մահմեդականներ և այդ պատճառով կոչվում էին կես-կես հայեր: Ս. Ա. Բախտիկյանը գրում էր, որ Արաբկիրի մի շարք շրջաններում հայերը շատ են ընկել «բարբարոս կառավարության մահասարսուռ անիվներուն տակ ու դարձել են զզվաչաներ, կես-կեսներ կամ մոլեռանդ թուրքեր, առանց սակայն մոնկոլական գիմաղիծ կրելու»<sup>71</sup>:

Արևմտահայերի մի մասն էլ գիմեց կաթոլիկ եկեղեցուն, կարծելով, որ կանցնի եվրոպական պետութունների հովանավորության տակ: Այգալես վարվեցին Դերջանի, Կարինի, Բասենի, ինչպես և Վասպուրականի մի շարք գյուղեր<sup>72</sup>: 1899 թ. փետրվարի 22-ին Վանի ռուսական փոխհյուպատոսը հաղորդում էր. «Ներկայումս Վանի մերձակա 18 հայ գյուղերի բնակիչներ համարյա ղլխովին իրենց հայտարարել են կաթոլիկներ: Կարելի է մոտ 20 դյուղ ևս հիշատակել, որոնց հայ ու ասորի բնակիչների մի մասը նույնպես թեքվել են կաթոլիկության կողմը»<sup>73</sup>: Սակայն այս հայերը շուտով համոզվեցին, որ անգլիական ու ֆրանսիական միսիոներները խաբել են իրենց և բռնելով լուսավորչական եկեղեցի վերադարձի ճամփան, հայտարարեցին նրանց. «Մենք այլևս վստահութուն չունենք ձեր վրա»<sup>74</sup>:

Եվ այնուամենայնիվ արևմտահայության ճնշող մեծամասնությունը հավատարիմ մնաց իր լեզվին ու հավատին և, դիմադրավելով համիդյան բիրտ ուժերին, շարունակեց հարատևել ինչպես իր հայրենիքում, այնպես էլ Թուրքիայի այլ շրջաններում: Թեոդիկի «Տարեցույց»-ի տվյալներով առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության մեջ հաշվվում էր շուրջ 2026700 հայ<sup>75</sup>, որոնք տեղաբաշխված էին հետևյալ կերպ. Սըվազի վիլայեթում՝ 225000, էրզրումի՝ 215000, Խարբեր-

68 «Հնչակ», 1901, № 5, էջ 48:

69 «Դրոշակ», 1905, № 2, էջ 21:

70 «Հնչակ», 1907, № 1, էջ 5:

71 Ս. Ա. Բախտիկյան. Արաբկիրը և շրջակայի գյուղերը, սլամա-ազգազրական համառոտ տեսություն. Պեյրութ, 1934, էջ 124:

72 «Դրոշակ», 1898, № 7, էջ 63, 1900, № 5, էջ 67:

73 РГИА, ф. «4. Պոլսի գեսպանությունը», 1899, գ. 1585, թ. 7:

74 Անգրանի կ. Առաքելոց վանքի կոնվ. Պոսըթոն, 1924, էջ 12–13:

75 Թեոդիկի «Տարեցույց»-ում բերված տվյալներն հաշվելիս ստացվում է 2026200:

դի՝ 204000, Դիրարբեքիլի՝ 124000, Բիթլիսի՝ 198000, Վանի՝ 197000, Կիլիկիայի՝ 205000, Տրապիզոնի՝ 65000, Կ. Պոլսում՝ 150.000, Իզմիրի՝ 72500, Էդիրնեի՝ 27500, Խույսուքի՝ 78000, Այդընի՝ 11000, Գասթեմոնի՝ 10000, Էնկյուրիայի՝ 115000, Գոնիայի՝ 25000, Երուսաղեմի՝ 2500, Բեյրութի՝ 600, Բաղդադի՝ 1000, Բասրայի՝ 400, Մոսուլի՝ 800, Դամասկոսի՝ 400, Հալեպի՝ 99000 մարդ<sup>76</sup>։

Մեզ թվում է, որ Թեոդիկի «Տարեցույց»-ում քիչ է ներկայացվում արևմտահայերի թվաքանակը։ Իրականում այն ավելին է եղել։ Հաշվումներից պարզվում է, որ առաջին աշխարհամարտի նախօրյակին թուրքիայում պետք է լիներ ավելի քան 2,5 միլիոն հայ, որից 1400000-ը՝ բուն Արևմտյան Հայաստանում<sup>77</sup>։ Այդ նշանակում է, որ չնայած թուրքական կառավարության հայահալած քաղաքականության, XX դ. սկզբին արևմտահայերի կեսից ավելին համարյա 60 %-ը դեռ գտնվում էր իր հայրենիքում։

Արևմտյան Հայաստանի մի շարք դավաճներում հայերը շարունակում էին հանդիսանալ բնակչության բացարձակ մեծամասնություն։ Այսպես. Վանի սանջակում նրանք կազմում էին 74%-ը, Բուլանըխում՝ 67%-ը, Մոկսում՝ 67%-ը, Արճեշում՝ 64%-ը, Ադլըկազում՝ 64%-ը, Մուշում՝ 62%-ը և այլն<sup>78</sup>։

Ամբողջ Արևմտյան Հայաստանում XX դ. սկզբին արևմտահայերն արդեն կազմում էին բնակչության հարաբերական մեծամասնությունը։ Ըստ Կ. Պոլսի պատրիարքարանի տվյալների, 1912–1913 թթ. երկրի 6 վիլայեթներում ապրում էին տարբեր ազգությունների ժողովուրդներ, որոնց թվաքանակն ու տոկոսային հարաբերություններն արտահայտվում էին հետևյալ կերպ<sup>79</sup>։

Թուրքեր	– 666000	երկսեռ անձ կամ 25,4 %
Չերքեզներ	– 62000	„
Պարսիկներ	– 13000	„ 3,4 %
Լազեր	– 10000	„
Գնչուներ	– 3000	„
Նստակյաց քրդեր	– 242000	„ 16,3 %
Քոչվոր քրդեր	– 182000	„
Ղրղրբաշներ	– 140000	„ 5,3 %
Զազա-թմբլիկներ	– 77000	„ 2,9 %
Եզդիներ	– 37000	„ 1,4 %
Հայեր	– 1018000	„ 38,9 %
Ասորիներ, իսալդեր և հակոբականներ	– 123000	„ 4,7 %
Հուլներ և այլ		

76 Թ ե ո դ ի Կ. Ամենուն տարեցույց, ԺԶ տարի, 1922, էջ 261–263։

77 Ա. Ա. Հ ա մ ր ա յ ա ն. Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 111։

78 Записки Кавказского отдела Императорского русского географического общества. Книжка X, VIII, Тифлис, 1896, приложения, с. 18–19.

79 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, թ. 12–13։

քրիստոնյաներ – 42000 „ 1,6 %

Այդ տվյալները ցույց են տալիս, որ հայերը կազմում էին բնակչության 38,9 %:

Արևմտահայերը շարունակում էին ապրել դերազանցապես գյուղերում և զբաղվում երկրագործությամբ ու անասնապահությամբ: Նրանց մյուս, համեմատաբար փոքր մասն էլ բնակվում էր քաղաքներում և զբաղվում արդյունաբերությամբ ու առևտրով: Հայերը ստվարաթիվ էին Արևմտյան Հայաստանի Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Իսկ Թուրքիայում՝ Կ. Պոլիս, Ադանա, Թոքատ, Ամասիա և այլ քաղաքներում:

#### АНТИАРМЯНСКАЯ ПОЛИТИКА ГАМИДОВСКОГО ПРАВИТЕЛЬСТВА В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (1898 – 1908 гг.)

АЗАТ АМБАРЯН

##### Р е з ю м е

Султан Абдул Гамид II после массового истребления западных армян в 90-х годах XIX в., продолжил их уничтожение и в начале XX века. Часть западных армян вынуждена была покинуть свою родину и бежать за границу, но основная масса осталась на родине и боролась против антиармянской политики Абдул Гамида II. В этой борьбе славную роль играли гайдуки Андраник, Ахбюр Сероб, Грайр, Геворг Чауш, Рубен Минасян и другие.

#### ANTI-ARMENIAN POLICY OF THE HAMID GOVERNMENT IN WESTERN ARMENIA (1898-1908)

AZAT HAMBARYAN

##### S u m m a r y

Sultan Abdul Hamid II not being satisfied with the mass extermination of Western Armenians in the 1890s, continued their massacres at the beginning of the 20th century as well. To escape the Sultan's policy a part of Western Armenians had to leave their native land and flee abroad. However the main part of them stayed in the motherland and fought against Abdul Hamid's anti-Armenian policy. In this struggle hayduks Andranik, Aghbiur Serob, Hrair, Gevorg Chaush, Rouben Minassian and others played a glorious role.